

### ԱՂԱՀԱՆՔ

Մարդուս պիտոյից ծառայող աղին մեծ մաս մը ծովու ջրերէն կը հանուի, անոր համար ալ ճովային աղ կը կոչուի, որ հանքերէն հանուած աղէն զանազանի:

Ծովային ջուրը գրեթէ իր յատուկ ծանրութեանը երեք հարիւրորդը աղ կը բովանդակէ. որով հարիւր լիտր ծովային ջրէ երեք լիտր աղ կրնայ հանուիլ:

Այս կերպ աղը գոլորշիացմամբ կը հանեն, կամ թէ անանկ մը ընելով որ ծովուն ջուրը գոլորշի դառնայ և օդուն մէջ կորսուի, մինչդեռ աղը ճերմակ ու գորշ հատիկներ ձեւացած՝ յատակը կը նստի:

Գիտէ ամեն մարդ ինչ կ'ըլլայ ջուրը՝ երբ ինչ և իցէ անօթի մը մէջ լեցուած կրակին վրայ կը դրուի. եռալ սկսածին պէս, հետզհետէ պղպղակներ ջրին երեսը կ'ըլեն. ջուրը գոլորշի կը փոխուի և օդուն մէջ կը ցրուի, իր քանակը կը նուազի, առջինին երրորդ մասը կ'ըլլայ, յետոյ կէսը, մէկ քառորդը, և անօթը կրակին վրայ թողլով՝ բոլորովին անյայտ կ'ըլլայ:

Անոր համար ծովու ջուրը կաթսայի մը մէջ եռացնելով, բոլոր ջուրը կը գոլորշիանայ ու տակը միայն աղը կը մնայ: Սակայն այս կերպը, որ ոչ միայն բազմածախ է՝ այլ և մեծ համեմատութիւնով գործադրելու անկարելի, քիչ քանակով աղ կրնայ տալ: Ծովային աղը ունենալու համար՝ ծովուն ջուրը ծանր ծանր կը գոլորշիացնեն, և անոր համար աղահանքաց մէջ օդուն և արևուն աղդեցութեանը տակը կը ձգեն զայն:

Աղահանքը՝ ծովեզերքին շատ մօտ ցած հողեր են, անանկ յարմարցուցած՝ որ ծովը զանոնք ողողէ ու մտած ջուրը մէյնըն ալ չկարենայ ետ քաշուիլ:

Աղահանքին առջևը խոր ընդունարան մը կայ, որ ծովուն հետ ջրանցքով մը կը հաղորդուի և ջրանցքին մուտքը անջրպետով մը գոցած է: Այս ընդունարանիս մէջ ջուրը կը հաւաքուի ու կը պահուի՝ որ ամենայն ազատ և զետեղ յատակը նստեցնէ, որ պղտոր լեցնէ:

Նարանիս մէջ ջուրը կը հաւաքուի ու կը պահուի՝ որ ամենայն ազատ և զետեղ յատակը նստեցնէ, և յետոյ այսպէս զտած ջուրը աւազաններուն մէջ կ'անցնի որ գոլորշիացածին տեղը լեցնէ:

Ընդունարանին ետևը եղած աղահանքը շատ մը պղտոր աւազաններ կամ բաժանմունքներ բաժնուած է, որ պղտոր եզերքներով մէկմէկէ կ'որոշուին. բոլոր այս բաժանմունքները մէջերին հաղորդակցութիւն ունին. խորութիւննին քիչ է, որպէս զի ջրի աւելի մեծ մակերևոյթ մը օդոյ և արևու աղդեցութեանը ենթակայ ընեն:

Մարտի ամսուն մէջ կը սկըտին ջուրը աւազաններուն մէջ լեցնել. երբոր կարմրութիւն մը կը սկըսի ստանալ, նշան է որ շուտ մը աղը պիտոր սկըսի բիւրեղանալ. և յիշուի վերջապէս աղային մաշկով մը երեսը կը ծածկի՝ որ յետոյ յատակը կ'իջնէ:

Աղը ձեւանալէն ետքը՝ աւազանայ չորս դին եզող եզերաց վրայ կը հաւաքեն, ուր կը թողուն՝ մինչև որ կատարեալ կերպով չորնայ: Օղը գեղեցիկ և չոր եղած ժամանակը՝ շաբաթը մինչև երկու երեք անգամ կը հաւաքեն, մայիսէն սկսեալ մինչև հոկտեմբեր:

### ՍԱՀՐԱ

Սահրայի անհուն անապատը սահման ունի հիւսիսէն Ատլաս լեռները, արևելքէն Նեղոսի հովիտը, հարաւէն Սուտան և Սենեկամպիան, արևմուտքէն Ատլանտեան օվկիանոսը: Արևմուտքէն արևելք գրեթէ 1200 փարսախ է, հիւսիսէն հարաւ 500, որ է ըսել ամբողջ եւրոպիոյ մակերևութէն մեծ: Ամեն կողմ աւազ է, բայց յուռթի ձորահովիտներ ալ գտնուեցան տեղ տեղ բարձրաւանդակներով պատած, որոնց մէջ ճէպէլ-Հոկր գլխաւորն է, որ կարծես թէ դէպ ՚ի լայնքը երկուքի կը բաժնէ զանապատը:

Սահրային հիւսիսային կողմն են Մա-

րորէն գատուած պղտի վիճակը, Սիտի-  
Հէչամ և Տարա, որոնց Դայէնդ և Տարա  
գլխաւոր քաղաքքն են: Մնացած բոլոր  
ուրիշ երկիրներու մէջ երեք ժողովուրդը  
կը բնակին, Մուղըիք, Դուարէք և Դիպ-  
պուր:

Արևմտեան կողմը Մուղըիք՝ անապա-  
տին բնիկ ճամբորդ վաճառականներն  
են, իրեն մօտերն են նաև Ովատան կամ  
Ոտէն և Արաւան ովասիսներն: Դուա-  
րէք վաչկատուն ցեղեր են, բերրի եր-  
կիրները կամովին կը թողուն ու ամայի  
տեղեր կը բնակին, և գողութեան սի-  
րով կեդրոնական կողմերը կը պատեն:  
Իրենց ովասիսներն են, Տուաթ, որուն  
գլ. քղ. է Ակապլի, կադ ու Աիրի եր-  
կիրը, Ակատէս: — Դիպպուր՝ առջին  
ներէն միակերպ կը նեղուին, բայց ի-  
րենք ալ անոնց պէս աւազակք են,  
գլխաւոր տեղին է Պիլմահ, Չատ լճէն  
Ֆէզան երթալու ուղիղ ճամբուն վրայ:

Ռիզդէր երեկի գերմանացի աշխար-  
հագիրն այսպէս կը ստորագրէ այս ա-  
ւազուտ ովկիանոսը.

Այս լայնածաւալ ծովուն բնութե-  
նէն ու էական յատկութենէն կախումն  
ունին իրեն մեջ տեսնուած ամեն ե-  
րևոյթներն ալ:

Ովկիանոսէն ալ աւելի խաբերայ է,  
և ինչպէս մարդս չի կրնար պրծիլ եր-  
կրաշարժէն՝ որ իր բնակած երկիրը վեր-  
ի վար կը չըջէ, այսպէս ալ ասոր ձեռ-  
քէն: Ամմոնիացիք՝ կամբիւսի բանա-  
կին աներևոյթ ըլլալուն վրայ աւան-  
դութիւն մ'ունէին, զոր ուրիշ տեղ բա-  
ցատրած եմք. խօսած եմք նաև աւա-  
զուտ մթնոլորտին վրայօք: Բոնսէ,  
Պրիւս, Մունկո-փարք, այն սոսկալի փո-  
թորիկները կը յիշեն, որ աւազները  
սպառնալից սեանց պէս ճանապարհոր-  
դաց չորս կողմը կը յարուցանեն. միայն  
լակոնաբան Պրաուն աներկիւղ կը գտնէ  
զատոնք: Արաբաց գրքերը վէպերով լի  
են աղբերաց ցամաքելուն և ուխտաւո-  
րաց աղետալի տեսարանաց վրայ: Լէոն  
Ափրիկեցին ծարաւէ մեռնողներուն վը-  
րայ շատ մը յիշատակարաններ գտած  
է՝ որ մինչև այն ատեն անծանօթ էին.

և ճէքսըն այս դէպքերուս ճշմարտու-  
թիւնը հաստատեց՝ իր անապատին սահ-  
մանները օթևանած ժամանակը եղած  
սոսկալի դէպքովը, որ 1805ին հանդի-  
պեցաւ: 2000 մարդով և 1800 ուղտով  
կարաւան մը ամբողջ թօմպուրթուէն  
Թաֆլէլը երթալու ճամբուն վրայ կոր-  
սուեցան. վասն զի ովասիս մը՝ որ առաջ  
կարաւանաց կայանք էր՝ յանկարծ ջու-  
րը կորսընցուցեր էր:

Բայց միայն ասոնք չեն անապատին  
նեղութիւնները. տարբեր տեսակ զրրկ-  
մունք մ'ալ կայ ճանապարհորդին: Ա-  
մենէն ընտիր տիկերն ալ տաք հովուն  
զարնելովը՝ շատ անգամ բոլորովին կը  
չորնան: Այն ատեն հարուստն երջա-  
նիկ կը համարուի՝ եթէ 40էն մինչև 2000  
ֆրանքի գումարով ալ գաւաթ մը ջուր  
գտնէ և կեանքը ազատէ: Շատ հեղ ուղ-  
տերն ալ յօգնութենէ և ծարաւէ կը  
մեռնին. երկայնագնաց ճանապարհոր-  
դութեանց մէջ՝ անոնց սպիտակացեալ  
կմախքները և ուրիշ գրաստեղէն կէտն-  
դանեաց ոսկորները՝ կարաւանաց ճամ-  
բաներուն վրայ տարածուած՝ անապա-  
տին վտանգներուն հաւաստիք են: Այս  
ոսկրներուն երևոյթը իմացնել տուաւ  
Բոնսէի, Լէոնի Ափրիկեցոյ, Պրիւսի,  
Հորնրմանի, Բարբի, Լայընի, և ուրիշ  
աւազէ ովկիանոսին հիւսիսային, արևե-  
լեան և հարաւային կողմերը ճանա-  
պարհորդողաց՝ այն անճողապրելի վը-  
տանգներն, ուսկից անցեր էին այն ա-  
հաւոր միայնութեան սահմանները կը-  
տրած ժամանակնին:

Թռչուններն անգամ՝ որ միայն չա-  
փաւոր սահման մը բնակուած տեղերէն  
անդին կը հեռանան, և անոր համար  
ալ մահմետականք կը կարծեն՝ որ մար-  
գարէէն զրկուած պատգամաբերք են՝  
զիրենք մխիթարելու և իրենց ոյժը ար-  
ծարծելու համար, այս թռչուններն իսկ  
շատ անգամ աւազոյ յորձանքներէն  
այն ցամաքեալ ծովուն առանձնութեա-  
նը մէջ կը ձգուին, և աւազուտ կողմե-  
րու վրայ իրենց մնացորդները կը տես-  
նուին: Անապատին այն ոռոգեալ քանի  
մը մասերն ալ՝ փղեր, կինճեր կը բնա-

կին, և եղբայրներն ալ կատաղի գազաններ, առիւծներ կը թափառին: Վայրագ ջայլամներ ու երագոտն յամայրներ միայն կրնան ապրիլ անապատին խորերը, ուր հովերուն սուր ձայներէն զատ ուրիշ բան չեն լսեր, և երբեմն երբեմն կարաւաններու կանոնաւոր ոտնաձայնը. վասն զի բուսաբերութիւնն անգամ գրեթէ չերևար հոն:

Միայն քանի մը մենաւոր բոյսեր կարծես թէ բնութենէն այնպէս ձևացած են՝ որ կարենան դիմանալ այն այրող քամիներուն, որ ընդհանրապէս իրենց անցած ճամբուն վրայի բաները կը մրկեն, և իրենց տապագին շունչը կը տապալէ զմարդ, զՄուղըին անգամ ուղեկից ուղտին հետ, և երկուքն ալ մահուան վախով կը պատեն: Կան գարի կամ ուղտափշի շատ տեսակներ՝ որ իրենց ժողովել կրցած քիչ մը խոնաւութիւնը տերեւներուն անկիւններուն մէջ կը պահեն, ալկոլը ըսուած մանանայի թուփն, հոտաւէտ զամբուռի (thymian) տեսակ մը, արաբացւոց շի ըսածը՝ որ զատուած գետիներու վրայ կը բուսնի, և քալ (mimosa gummifera) որ մերկ և պինդ երկրի վրայ կ'աճին, ահա ասոնք են սովորական բոյսերն, և շատ անգամ երկայն ամիսներով ուղտը և էջք ասոնցմէ զատ ճարակ չեն գտներ:

Բայց սակայն տեղ տեղ անշուր երկիրներու մէջ ալ ասոցիս անդին քանի մը խամրած թուփեր կ'աճին՝ որ կարաւաններու առաջնորդ կ'ըլլան, և որոնց անհիւթ տերեւները զրաստուց պապակեալ լեզուն անգամ չեն զովացըներ. քանի մը պատասպարեալ տեղերու մէջ ալ պատկառուկներ կամ փշոտ ակասիաներ կը բուսնին՝ որոնցմէ խէժ կ'ելլայ:

Բնութեան այս տկար բերքերէն զատ, ամեն դի երկնքէ ու աւազէ զատ բան չերևար. այն տեղերը որ բոյսերէ զուրկ չեն և արմաւենիք պրակ մ'ունին՝ Արաբացիք կղզի կը սեպեն և ճէգիտ կամ ճագր կ'ըսեն:

Բայց յայտնի է որ ինչպէս երկրիս ուրիշ մասերուն վրայ՝ այսպէս ալ հոս

այս ցամաքութեան վրայ բուսաբերութիւնը պիտի տիրէր եթէ տարուէ տարի, մանաւանդ թէ օրէ օր գետնին երեսը տեղէ տեղ չփոխուէր: Ամենայն սերմանած բան աւազով մէկտեղ տեղէն կ'ելլէ, և ուր որ քանի մը խեղճ թուփ ալ կը տեսնուի, հոն քիչ ատենէ գրեթէ աւազէ բլուր մը կը ձևանայ. և եթէ երբեմն դիպուածով բուսականութիւնը տեղ մը արմատ ձգած է, անտարակոյս այն ալ երկայն ատեն չիքչեր, վասն զի չիկրնար դիմանալ աւազի ընդհանուր շարժմանց դէմ՝ գիշերահաւասարաց եղանակին մրկաց ատեն:

Մարդս է միայն որ անապատը իրեն հիւրընկալ ըրած է. և այս յայտնի է որ ոչ այնքան աւազէ ովկիանը զՍուտան հիւսիսային Ափրիկիոյ երկիրներէն կը զատէ, որչափ ասոնք զատուած են Եւրոպայէն՝ Միջերկրական ծովով:

Մարդս կրցած է աւազէն օգուտ մ'ալ քաղել. երբոր զովագին հողմերը կը սկըսին փչել, Ֆէզանցին այս յարատեարևէ տաքցած կոյտին մէջ կը պառկի, ու ցրտին դէմ ապաստանարան մը կը գտնայ: Եթէ խօսակցութիւն մը ունենալու ըլլայ իր մերձաւորաց հետ՝ նախ և առաջ դիմացի գետինը կը շրտկէ, որպէս զի իր մտածութեանցը ամեն մէկ վճիռները պատկերելով ալ ձևագրէ: Եթէ առուտուր մ'ընէ՝ մէկէն աւազին վրայ իր հաշիւը կը տեսնայ: Մուղըիք և իրենց բազմաթիւ ֆաբրիկներն ու մուլաներն ալ՝ մահմետականաց ջրոյ տուած ազդեցութիւնը՝ ստիպեալ են տալու աւազին, ու իրենց կրօնական լուացմանց գործածելու: Բայց ամենէն աւելի մտադրութեան արժանին է մարդու ճանչցած օգուտն ուղտին վրայ, զոր իր բնական վիճակէն հանելով իրեն գերին և ընկերն ըրած է, որուն սապատողն, ստամոքսն և ատամունքն՝ Սահրայի գետնին շատ աղէկ կը համեմատին:

Ուղտը անապատին նաւն է, և առանց անոր մարդ չիկրնար աւազեայ ովկիանէն անցնիլ: Իր մէկ հատիկ և զլիսաւոր աշխատութիւնն է ճանչնալ

եղանակները, իջեվանները, և ղէպ 'ի որոշեալ զիրքը զիմել: Անոր համար է որ այն կողմերու առաջնորդքն գիտուռնք, իմաստուռնք կը կոչուին, հիպեր և խապիր (ըստ Արաբացոց): Այն տեղերը անտառներ, գետեր, լեռներ, ճամբաներ չըլլալուն՝ այլ շարժուն բլուրներ, հիպեններն՝ թռչնոց, ագռաւներու և անգղներու թռչելու ուղղութեանը համեմատ կ'երթան, որք բնակուած տեղերու մտ կը տեսնուին, և կամ ուր որ կարավանք զիակներ ձգած են. կամ թէ նաւավարաց պէս հողմերու ուղղութեամբը կ'երթան: Եւ որովհետեւ աւելի զիշերները քան թէ ցորենները կը ճանապարհորդեն, աստղներու ու համաստեղութեանց վրայ ալ քիչ մը ծանօթութիւն ունին. օրինակի համար կը ճանչնան բւեռային աստղը, որով զիրենք կ'ուղղեն. բայց կ'երևայ թէ իրենց գիտութեան սահմանը հոն կը լիննայ, գոնէ նկատմամբ թօմպուրդուի և Տարֆուրի կարաւանին գիտնոցը: Կողմնացոյց ալ չեն ճանչնար, թէպէտ և քանի մը Արաբացի պատմագիրք կ'ապահովընեն՝ որ անապատներու մէջ ճամբորդութեան միջոց գըպլէի—նաւէ կը գործածեն:

Ինչպէս որ հիւսիսոյ սառամանեաց մէջ, ու Ալպեան լեռանց առաջնորդներն՝ սառոյցէ բլրոց և բաւղաց և գահավիթից մէջ չմնորելու համար՝ քարեր կը կուտեն, հիպերներն ալ միշտ չորս հինգ կտոր քարեր կը զիզեն՝ որ իրենց առաջնորդ ըլլան ետ դառնալու ատեն: Իսկ ուր որ քար չի գտնուիր՝ հարկադրեալ են իրենց շաւիղները ժայռերու ցցումներու ուղղութեամբը գրծելու. բայց այս կերպս ապահով չէ, վասն զի շատ հեղ ժայռերու գլուխներն ալ աւազով կը ծածկուին:

Այս ամեն բանով կը տեսնենք՝ որ ամեն տեղ ամենամեծ արգելքներ կ'ելլեն այս աւազեայ ովկիանոսին մէջ բան մը հաստատելու: Պրաուն իր Տարֆուրի ճանապարհորդութեան մէջ շատ անգամ զիտեց՝ որ ամենէն հմուտ առաջնորդներն ալ (խապիր), որոնք տասն

երկու անգամ նոյն ճամբաներն ըրած էին, այս անգոր ընդարձակութեան մէջ ղեռ չէին կրնար գտնել ճամբան, և ղէտեր կը զրկէին զիրար գտնելու համար:

Չարմանք չէ ուրեմն՝ որ ուղղեցոյցը ըստին իմաստունք այնպիսի երկրի մը մէջ ուր ամեն բան թափառական է, թէ բնութիւն, թէ մարդիկ և թէ ժողովուրդք, ցեղք և կրօնք: Երկրիս ո՞ր կողմի բնութեան տեղական կերպարանքն այնպէս զօրաւոր և ազդեցիկ է՝ ինչպէս անապատին մէջ:

Կ. ՌԻԳԻԵՐ:

### ՀԻՆԳ ՇԱԲԱԹ ՕԳԱՊԱՐԿԻ ՄԷՁ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳՂԻԱՑԻՈՑ

ՅԱՓՐԻԿԷ

(Տես էրես 117)

ԳԼՈՒԽ Ը.

Բարեյուսոյ գրոխը կ'անցնին. — Նաւագիսիև բարձրաւանդակը. — Տիեզերագրական դասասիստարիւն 'ի ճոյ ուսուցչէ. — Օրսպարկաց կասափարոսրեանը վրայ. — Մրնոյորտի հոսանաց քննոսրեանը վրայ. — Ευρεα:

Բիզոյիշոյ շոգենաւը արագընթաց ղէպ 'ի Բարեյուսոյ Գլուխը կը յառաջէր. օղը միշտ աղէկ կը յարատեւէր, թէպէտ և ծովը քիչ մը աւելի յուզեալ էր:

Մարտի 30<sup>են</sup>, Լոնտրայէն քսանեւթօթն օր ելլելէն ետքը, Սեղան լեռը հորիզոնին վրայ սկսաւ գծագրիլ. Բարեյուսոյ Գլխուն քաղաքը, բլրոց ամիթիթէատրոնի մը ոտքը շինուած, ծովային դիտակաց ծայրը սկսաւ տեսնուիլ, ու քիչ մը ետքը Բիզոյիշոյը նաւահանգստին մէջ խարխիս նետեց: Սակայն հրամանատարը միայն ածուխ առնելու համար նաւահանգիստը մտեր էր, որ ամբողջ օր մը տևեց. երկրորդ օրը նաւը ղէպ 'ի հարաւ կը խոտորէր, որ Ափրիկէի հարաւային ծայրը անցնի ու Մոզամպիլի շրանցքը մտնէ: